Նարեկ Սարգսյան

Ամենամեծ հարստությունը

Լինում է, չի լինում, մի աղքատ գյուղացի է լինում: Նա ունենում է հինգ երեխա և մի գեղեցիկ կին: Այս խեղճն օրնիբուն աշխատում, չարչարվում էր, սակայն չէր կարողանում անգամ իր ընտանիքի հանապազօրյա հացը վաստակել:

Գյուղացին մի օր՝ սովորականի պես տուն վերադառնալիս, հանդիպեց Սատանային:

-Ինչու՞ ես տխուր, գյուղացի՛ եղբայր,- կեղծավորաբար հարցրեց Սատանան:

-Դե ախր ո՞նց տխուր չլինեմ, վերադառնում եմ տուն, իսկ կինս ու երեխաներս քաղցած ինձ են սպասում,-դառնորեն պատասխանեց գյուղացին:

-Լավ, այդքան մի տխրիր, ես գիտեմ, թե քեզ ինչպես կարող եմ օգնել,-ասաց Սատանան:

-Այդ ո՞նց, ախր դու Սատանան ես և բարի գործեր չես անում,-զարմացավ գյուղացին:

-Խաբել են քեզ, միամի'տ եղբայր, ես քեզ նման արժանավոր, աշխատասեր մարդկանց օգնում եմ: Ուզու՞մ ես հարստանալ:

-Դա հնարավո՞ր է- հարցրեց գյուղացին:

-Եղբա՛յրս, ինձ համար անհնարին ոչինչ չկա: Միայն թե դու կոնկրետ ասա՝ ինչ ես ուզում, և ես քո նվիրական երազանքը կկատարեմ:

-Ճի՞շտ ես ասում,-կասկածանքով հարցրեց գյուղացին:

-Գյուղացի' եղբայր, հասկանում եմ, որ դու իմ մասին մինչ օրս շատ վատ բաներ ես լսել, բայց դա ամբողջովին սուտ է, քանի որ նման լուրեր տարածում են ինձ նախանձողները: Եվ այսպես, ի՞նչ ես ուզում, եղբա՛յրս:

Սատանայի ինքնավստահ խոսքերն ու շարժուձևը վստահություն ներշնչեցին գյուղացուն, և նրա աչքերը փայլեցին երջանկությունից:

-Ուզում եմ հարստանալ, ունենալ շքեղ դղյակ, պարկերով ոսկի և այլ զարդեղեն, նաև ուզում եմ հեկտարներով պտղատու այգիներ, հարյուրավոր անասուններ:

-Ը~հ-ը, ապրես, դու արժանի ես նրան, ինչ ցանկանում ես: Վերջապես ինչո'վ ես պակաս մյուս հարուստներից: Հետո էլ բողոքում ես բախտիցդ: Քո բախտը հենց ես եմ, որին դու հիմա հանդիպեցիր: Այն, ինչ դու ուզում ես, հենց այսօր էլ կունենաս:

-Իսկապե՞ս,- ապշեց գյուղացին:

- Հա բա: Դե լավ, հիմա արի գնանք իմ դղյակ, մի փոքր գործ կա քեզ հետ,-ասաց Սատանան:

-Ի՞նչ գործ,- վախեցած հարցրեց գյուղացին:

-Մի՛ վախեցիր, վստահի՛ր ինձ, շուտով դու կունենաս այն, ինչ երազում ես:

Եվ այսպես, գյուղացին, հավատալով Սատանային, գնաց նրա ետևից: Գնացին, գնացին և վերջապես հասան Սատանայի դղյակին, որի դարպասները հսկում էին դևերը:

-Մի' վախեցիր, քեզ ոչ ոք վնաս չի տա,- ժպտալով ասաց Սատանան:

-Բայց եկել ենք այստեղ որ ի՞նչ անենք,- զարմացած և վախեցած հարցրեց գյուղացին:

Սատանան, շարունակելով անվրդով ժպտալ գյուղացուն, ուղեկցեց դեպի իր դղյակի խորշերում գտնվող մի մութ մառան, սնդուկից հանեց մի սև փայտիկ և ասաց.

-Հիմա դու արդեն ունես այն, ինչ ուզում ես, և որպես շնորհավորանք, թու՛յլ տուր այս փայտիկով երեք անգամ հարվածեմ քո գլխին:

Սատանան երեք անգամ փայտիկով գյուղացու գլխին հարվածելուց հետո քթի տակ աննկատ քմծիծաղելով ասաց.

-Վերջ, բարեկա՛մս, հիմա կարող ես հանգիստ տուն վերադառնալ և վայելել քո հարստությունը:

-Շատ շնորհակալ եմ,- ուրախ ասաց գյուղացին և վազելով՝ վերադարձավ տուն:

Տան ճանապարհին նկատեց, որ իր հին տան տեղը մի գեղեցիկ նոր դղյակ էր դեպի վեր խոյացել: Ուրախությունից խելքը կորցրեց, ներս մտավ ու տեսավ իր երեխաների և կնոջ՝ երջանկությունից փայլող դեմքերը, տեսավ ոսկով և թանկարժեք քարերով լցված պարկերը, իսկ դղյակից դուրս՝ մի փոքր հեռվում՝ հեկտարներով

պտղատու այգիներ և հարյուրավոր անասուններ, որոնք մեկ ակնթարթում դարձել էին իրենը:

Անցավ որոշ ժամանակ, և հանկարծ անսպասելիորեն կինն ու երեխաները սկսեցին հիվանդանալ: Գյուղացին կանչեց աշխարհի ամենահմուտ և խելացի բժիշկներին, սակայն բոլորը, ուսերը թափ տալով, զարմացած հեռանում էին՝ պնդելով, որ հիվանդությունն իրենց անծանոթ է, հետևաբար բուժել չեն կարող: Գնալով՝ երեխաների և կնոջ հիվանդությունն ավելի էր սրվում. նրանք հյուծվել էին, մարմնի տարբեր մասերում վերքեր և խոցեր էին գոյացել, ցավերից գալարվում էին:

Գյուղացին հուսահատությունից գլուխը կորցրել էր, չգիտեր՝ ինչ աներ: ԵՎ մի օր պատահաբար հանդիպեց Սատանային:

-Գյուղացի՛ եղբայր, ինչու՞ ես տխուր, քեզ այդքան հարստության տեր դարձրի, բայց ոնց որ թե էլի դժգոհ ես:

-Բա ո՞նց ուրախ և գոհ լինեմ: Ճիշտ է, ես ստացա այն, ինչ երազում էի, ինչին ձգտում էի, սակայն կնոջս և երեխաներիս առողջությունն ու կյանքն ինձ համար ամենաթանկն են, աշխարհում ոչինչ չի կարող փոխարինել նրանց: Չլինի՞ քո մատը խառն է այս ամենի մեջ,- զայրացած հարցրեց գյուղացին:

-Ա'յ մարդ, էս ժողովուրդը իրոք անշնորհակ և երախտամոռ է: Ամբողջ օրը ձեզ համար չարչարվում եմ, բայց մեկ է, ինձանից միշտ դժգոհ եք լինում: Հարգելիս, ես քո նվիրական երազանքը կատարել եմ, էլ ինչի՞ց ես դժգոհ: Հետո էլ բա ի՞նչ էիր կարծում, երբ ինձ հետ գործարքի մեջ էիր մտնում: Իմացի՛ր, կյանքի օրենքը հետևյալն է. ինչ ուզում ես ստանալ, դրա դիմաց ինչ որ բան պետք է զոհաբերես: Դու էլ զոհաբերել ես քո ընտանիքի երջանկությունը և առողջությունը, որպեսզի ստանաս քո ուզածը: Վերջապես ես ի'նչ մեղք ունեմ, որ դու այնքան հիմար ես, որ կարծում ես, թե ես քեզ հենց այնպես պետք է օգնեմ՝ փոխարենը ոչինչ չվերցնելով:

-Բայց սրիկա՛, դու պետք է նախօրոք ինձ զգուշացնեիր հետևանքների մասին: Հիմա եմ հասկանում, թե ինչու ինձ տարար քո դղյակ և դիվային փայտիկովդ երեք անգամ հարվածեցիր գլխիս:

-Բարեկա՛մս, դու հետևանքների համար ոչինչ չես հարցրել, ես էլ մոռացել եմ քեզ ասել: Այնպես որ, ամեն ինչ արդար է, և ես քեզ չեմ խաբել: Հիմա ես պետք է գնամ, շատ գործեր ունեմ, դեռ շատ մարդկանց պետք է օգնեմ,-ասաց Սատանան և հեռացավ:

Գյուղացին չգիտեր, թե ինչ աներ: Տխուր-տրտում քայլում էր և հանկարծ հանդիպեց մի հրեշտակի:

-Հրեշտա՛կ իմ բարի, խնդրում եմ ինձ օգնիր:

-Ի՞նչ է պատահել, գյուղացի՛ եղբայր,- հետաքրքրվեց հրեշտակը: Գյուղացին պատմեց, թե Սատանան ինչ փորձանք է բերել իր գլխին:

-Դե լավ, մի՛ հուսահատվիր, ես քեզ կօգնեմ: Դու չպետք է օգնություն խնդրեիր Սատանայից: Չէ՞ որ շատ լավ գիտես, որ Սատանան չարիքի արարիչն է աշխարհում:

-Ախր այդ ժամանակ ես շատ տխուր և հիասթափված էի, իսկ նա էլ օգնություն առաջարկեց...

-Լսի՛ր, -ասաց հրեշտակը,- այս կյանքում քո ուզածին հասնելու համար պետք է ջանք ու եռանդ ներդնես. ոչինչ հենց այնպես մարդուն չի տրվում: Ուզու՞մ ես պտղատու այգի ունենալ, ուրեմն սկսիր այն տնկել, ուզու՞մ ես բազում անասուններ ունենալ, սկսիր մեկ կով պահելուց, իսկ դու ընտանիքդ պահելու և հարստանալու հեշտ ճանապարհներ ես փնտրում: Բացի դրանից դու մինչ այդ օրնիբուն աշխատում էիր այս կամ այն հարուստի համար, իսկ նրանք էլ օրվա վերջում քեզ խաբում և չէին վարձատրում, ու դրա հետևանքով չէիր կարողանում ընտանիքդ կերակրել: Իսկ այդքան խաբվելուց հետո չե՞ս մտածել, որ օրինակ, կարելի է, վարձատրությունը պահանջել գործը սկսելուց առաջ, այդպես քեզ չեն խաբի:

Գյուղացու միտքը շողաց: Մինչ այդ նա դրանց մասին չէր մտածել:

-Ես հասկացա իմ բոլոր սխալները, բարի՛ հրեշտակ, բայց հիմա ինձ ասա, թե ինչպե՞ս անեմ, որ կինս ու երեխաներս բուժվեն,-հարցրեց գյուղացին:

-Ուշադիր լսիր, թե ինչ եմ ասում,-ասաց հրեշտակը,-գնա' տուն, պտղատու այգիներդ և ողջ հարստությունդ բաժանիր աղքատներին, իսկ գլխիդ այն տեղը, որը Սատանան իր փայտիկով երեք անգամ հարվածել է, կլվանաս այս շշի ջրով:

Գյուղացին արեց այնպես, ինչպես ասաց հրեշտակը: Կինն ու երեխաներն ապաքինվեցին, սկսեցին երջանիկ ապրել: Գյուղացին սկսեց իր քրտինքով դատել, անասուն պահել, պտղատու այգի հիմնել: Արդեն հարուստների մոտ աշխատելիս վճարը նախօրոք էր վերցնում և չէր խաբվում ու այլևս չէր ձգտում հարստության, քանի որ հասկացավ, որ իր ամենամեծ հարստությունն ընտանիքն է: